ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

29.09.2022թ.

ՈՐՈՇՈՒՄ 747-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԻՑ «ԳՈՌ ԵՎ ԳՈՀԱՐ» ՍՊԸ-ԻՆ 0.00060ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՍԵՐՎԻՏՈՒՏ) ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի ԹԻՎ 142-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 50-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի հանրապետության Սյունիքի մարզի Գորիսի քաղաքային համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Գորիսի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասինե թիվ 1053-Ն որոշման, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիք մարզի Գորիս համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 9-ի թիվ 24-Ա և 2022 թվականի հունիսի 29-ի թիվ 107-Ա որոշումները, հաշվի առնելով «Գոռ և Գոհարե ՍՊԸ-ի 2021 թվականի նոյեմբերի 2-ի դիմումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե՝

1. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Գորիս համայնքի Ակներ գյուղում գտնվող գյուղատնտեսական նշանակության այլ հողերից՝ 0.0006հա մակերեսով հողատարածքը (վկայական N30032022-09-0051) սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ) 5 (հինգ) տարի ժամկետով տրամադրել «Գոռ և Գոհարե ՍՊԸ-ին՝ տարեկան վարձավճար սահմանելով 10000 (տասը հազար) ՀՀ դրամ:
2. «Գոռ և Գոհարե ՍՊԸ-ի հետ կնքել սերվիտուտի պայմանագիր, և սահմանել, որ պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո դադարում են կողմերի իրավունքներն ու պարտականությունները:
3. Ուժը կորցրած ճանչել Գորիս համայնքի ղեկավարի 2022 թվականի փետրվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս քաղաքի վարչական սահմանում գտնվող հողերից «Գոռ և Գոհարե ՍՊԸ-ին 0.00060հա հողամասը սահմանափակ օգտվելու իրավունքով /սերվիտուտ/ տրամադրելու մասինե թիվ 142-Ա որոշումը:
4. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ